

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2017

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ

ՀԱՐՑԱՏՈՄՍ

12 - րդ դասարան

I. ԹԵՍՏՍԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8 – րդ առաջադրանքներ: (0,25 X 8 = 2 միավոր)

1. Ե՞րբ է տեղի ունեցել Խանասորի արշավանքը.

- |                            |                               |
|----------------------------|-------------------------------|
| 1) 1897 թ. հունիսի 25 – ին | 3) 1898 թ. հուլիսի 25 - ին    |
| 2) 1897 թ. հուլիսի 25 – ին | 4) 1890 թ. սեպտեմբերի 22 - ին |

2. Որտե՞ղ է գործում նշանավոր Հայկազյան համալսարանը.

- |           |            |
|-----------|------------|
| 1) Հալեպ  | 3) Բեյրութ |
| 2) Կահիրե | 4) Սպահան  |

3. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

*«Լեոնային Ղարաբաղը մշտնջենապես բնակեցված է եղել հայերով և նրանց հայրենիքի մի հատվածն է, որը, Ստալինի մեղքով հայտնվելով Ադրբեջանի կազմում, 65 տարի շարունակ ենթարկվել է ստորացման, վիրավորանքների ու ամեն տեսակի ճնշումների... Լեոնային Ղարաբաղի ճակատագիրը կարող են լուծել միայն Լեոնային Ղարաբաղի բնակիչները... Ստեղծված իրավիճակի միակ ճշմարիտ լուծումը կարող է լինել Լեոնային Ղարաբաղի դուրսբերումը Ադրբեջանի կազմից»:*

Ե՞րբ է կատարվել վերոհիշյալ հայտարարությունը.

- |                           |                            |
|---------------------------|----------------------------|
| 1) 1988 թ. հուլիսի 18-ին  | 3) 1988 թ. հունիսի 15-ին   |
| 2) 1988 թ. փետրվարի 20-ին | 4) 1988 թ. նոյեմբերի 28-ին |

4. Ե՞րբ Դրոյի և Նժդեհի ջոկատները Զանգեզուրից մտան և ազատագրեցին Արցախը.

- |                        |                       |
|------------------------|-----------------------|
| 1) 1920 թ. ապրիլին     | 3) 1919 թ. ապրիլին    |
| 2) 1919 թ. հոկտեմբերին | 4) 1920 թ. նոյեմբերին |

5. Ո՞ր շարքում ընդգրկված բոլոր անուններն են բռնաճնշումների զոհ դարձած Կարմիր բանակի հայ զորահրամանատարների անուններ.

- 1) Գրիգոր Խախանյան, Հայկ Բժշկյանց (Գայ), Ստեփան Շահումյան
- 2) Գրիգոր Հարությունյան, Հայկ Բժշկյանց (Գայ), Սուրեն Շահումյան
- 3) Գրիգոր Խախանյան, Հայկ Բժշկյանց (Գայ), Սուրեն Շահումյան
- 4) Գեորգի Հարությունյան, Հայկ Բժշկյանց (Գայ), Սուրեն Շահումյան

6. ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումները ո՞ր շրջանն են ազատագրել 1993 թ. նոյեմբերի 1-ին.

- 1) Կուրաթլի
- 2) Ֆիզուլի
- 3) Ջաբրաիլ
- 4) Ջանգելան

7. Ո՞վ է ղեկավարել Երևանի նահանգի հայության 1905 թ. ինքնապաշտպանությունը.

- 1) Վարդանը
- 2) Արմեն Գարոն
- 3) Նիկոլ Դումանը
- 4) Քեռին

8. Ե՞րբ է Արմինիայի կենտրոն դարձել Պարտավը:

- 1) VII դ. վերջին
- 2) VIII դ. սկզբին
- 3) VIII դ. վերջին
- 4) IX դ. սկզբին

*բ. Լրացնել պատասխանը:*

**(0,5 X 6 = 3 միավոր)**

1. Հրամանատարների անունները համապատասխանեցնել գորամիավորումների անվանումներին. **(0,5 միավոր)**

- 1) Առանձին հայկական կորպուս
- 2) Առանձին հայկական կորպուսի Երևանյան գորախումբ
- 3) Հայկական առանձին հարվածային գորամաս
- 4) Մարդարապատի ջոկատ
- 5) Կովկասյան ռազմաճակատ
- 6) Առանձին հայկական կորպուսի առաջին դիվիզիա

- ա) Դանիել Բեկ-Փիրումյան
- բ) Անդրանիկ
- գ) գեներալ Հ. Բագրատունի
- դ) Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյան
- ե) Մովսես Սիլիկյան
- զ) Թովմաս Նազարբեկյան
- է) գեներալ Պրժնալսկի

1	2	3	4	5	6

**2. Աշխատության վերնագիրը համապատասխանեցնել հեղինակի անվանը.**

**(0,5 միավոր)**

- |                         |                             |
|-------------------------|-----------------------------|
| 1. Ստեփանոս Տարոնեցի    | ա. «Ջերմանց մխիթարություն»  |
| 2. Սմբատ Գունդատարլ     | բ. «Տարեգիրք»               |
| 3. Ներսես Շնորհալի      | գ. «Պատմություն Հայոց»      |
| 4. Գրիգոր Տաթևացի       | դ. «Տիեզերական պատմություն» |
| 5. Մխիթար Հերացի        | ե. «Ողբ Եդեսիոյ»            |
| 6. Արիստակես Լաստիվերցի | զ. «Գիրք հարցմանց»          |
|                         | է. «Պատմություն»            |

1	2	3	4	5	6

**3. Բարունիների անունները համապատասխանեցնել ուսումնագիտական կենտրոններին.**

**(0,5 միավոր)**

- Նարեկավանք
- Տաթև
- Սանահին և Հաղպատ
- Անիի վարդապետարան
- Նոր Գետիկ
- Գլաձոր

1	2	3	4	5	6

- ա. Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի  
 բ. Ներսես Լամբրոնացի, Վահրամ Բարունի  
 գ. Մխիթար Գոշ  
 դ. Վարդան Արևելցի, Հովհաննես Երզնկացի, Դավիթ Ալավկատրդի  
 ե. Անանիա Նարեկացի  
 զ. Ներսես Մշեցի, Եսայի Նչեցի  
 է. Հովհաննես Իմաստասեր

**4. Վահանանց պատերազմի շրջանի իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը:**

**(0,5 միավոր)**

- Մարզպան Ատրվշնասպի բանակումը Շիրակի Անի ամրոցի մոտ
- Հայ զորականների հասնելը Վարազկերտ գյուղ
- Հայ զորականների 400-հոգանոց գնդի բանակումը Ակոռիի մոտ
- Վահանանց ապստամբական կառավարության կազմումը
- Ներսեհապատի ճակատամարտը
- Սահակ Բագրատունու և Վասակ Մամիկոնյանի զոհվելը

**5. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**  
(0,5 միավոր)

- ա. Բաղեշի Ամիրդուլու վանքի դպրոցի հիմնադրումը
- բ. Հովհաննավանքի դպրոցի փոխադրումը Ս. Էջմիածին
- գ. Առաքել Դավրիժեցու «Պատմության» առաջին տպագրությունը
- դ. Երևանի Անանիա առաքյալի անապատի հիմնադրումը
- ե. Գրիգոր Տաթևացու փոխադրվելը Մեծոփավանք
- զ. Հովհաննավանքի դպրոցի հիմնադրումը

1	2	3	4	5	6

**6. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղարների անունները դասավորել ըստ ԿԿ-ի առաջին քարտուղար դառնալու ժամանակագրական հաջորդականության.**

(0,5 միավոր)

- ա) Յակով Չարոբյան
- բ) Կարեն Դեմիրճյան
- գ) Աղասի Խանջյան
- դ) Գրիգոր Հարությունյան
- ե) Սուրեն Հարությունյան
- զ) Սուրեն Թովմասյան


1	2	3	4	5	6

**գ. Լրացնել պատասխանը: (1 X 4 = 4 միավոր)**

**1. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ. (1 միավոր)**

- 1) Հայոց գահին բազմած պարթև Արշակունիների մի ճյուղը ժամանակի ընթացքում դարձավ ժառանգական հայկական արքայատոհմ և հայոց պետական համակարգը շարունակեց հայկական պետականության հազարամյա ավանդույթները:
- 2) Արշակունյաց Հայաստանը Տրդատ I Արշակունու ժամանակներից շարունակում էր մնալ միապետություն, որի կառավարման համակարգը գլխավորում էր թագավորը՝ անսահմանափակ իշխանությամբ:
- 3) Արարատյան կամ Վանի համահայկական թագավորությունը հինարևելյան տիպի դաշնային պետություն էր:
- 4) Արշակունյաց Հայաստանը չպահպանեց նախորդ ժամանակներում ձևավորված Մեծ Հայքի վարչական բաժանումը և նախկին նահանգների փոխարեն ստեղծվեցին չորս խոշոր բղէշխություններ, որոնք բաժանված էին 191 նախարարությունների:

- 5) Արշակունի թագավորներին էին ենթարկվում նախորդ դարաշրջաններում ձևավորված արքունի գործակալությունները, որոնց միջոցով միապետը կառավարում էր երկրի տնտեսությունը, շինարարությունը, հարկահանությունը, ռազմական, դատական և այլ բնագավառները:
- 6) Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո թեև իշխանությունն անցավ հայոց նախարարներին, սակայն նախարարական համակարգը միջնադարում չկարողացավ դառնալ հայոց պետականության կրողն ու պահապանը:
- 7) Վարդանանց և Վահանանց ազատագրական ապստամբությունները նշանավորեցին հայոց անկախ պետականության իրավական վերականգնումը և հայոց տանուտիրական համակարգի կատարելագործումը Հայաստանում:
- 8) Վաղ միջնադարյան Հայաստանում շինականները թեև չունեին սեփականություն՝ հող, գյուղատնտեսական գործիքներ կամ անասուն, սակայն իրավունք ունեին օգտվելու գյուղական համայնքի հողերից՝ պետությանը հարկեր վճարելու պայմանով:
- 9) Բագրատունիների օրոք պահպանվեց նաև Արշակունյաց ժամանակաշրջանին այնքան բնորոշ հակասությունը թագավորի և եկեղեցու միջև, քանի որ հայոց կաթողիկոսը չէր ճանաչում թագավորի գերիշխանությունը:



## 2. Տրված պնդումներից որո՞նք են ճիշտ.

(1 միավոր)

- ա. Հայաստանի ազատագրությունը, ըստ Մ. Սարաֆյանի ծրագրի, պետք է իրականանար միայն հայերի ուժերով՝ օտար լծի դեմ համաժողովրդական ապստամբության շնորհիվ:
- բ. Արևելյան Վրաստանն ընդգրկող Քարթլի-Վախեթի թագավորության սահմաններում էին ներառված հարավային Հայաստանի մի քանի գավառներ՝ Լոռին, Փամբակը, Շամշադինը, Սյունիքը, Օրդուբադը:
- գ. Ռուսական արքունիքը Հայոց եկեղեցու միջոցով իր ազդեցությունն էր պահպանում նաև արևմտահայության և գաղութահայության վրա:
- դ. Բեռլինում մեծ տերությունների ներկայացուցիչներն ուշադրությամբ ծանոթացան Մ. Խրիմյանի գլխավորած հայ պատվիրակների խնդրագրերին և նրանց թույլ տվեցին մասնակցել վեհաժողովին:
- ե. Կայսերական Գերմանիան և Ավստրո-Հունգարիան գործնական լուրջ քայլերի դիմեցին՝ կանխելու կամ արգելակելու իրենց դաշնակից Օսմանյան Թուրքիայի կողմից կատարվող հայերի ցեղասպանությունը:
- զ. 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո ռուսական նոր իշխանությունը չփոխեց իր վերաբերմունքն Արևմտյան Հայաստանի և հայերի նկատմամբ և հայկական մարզերում շարունակեց նախկին քաղաքականությունը վարել:
- է. Երզնկայի զինադադարից հետո կովկասյան ռուսական զորքերի հետքաշումը ճակատային դիրքերից շատ արագորեն ընդունեց ռազմաճակատի տարերային փլուզման և զորքերի անկազմակերպ նահանջի բնույթ:

ը. Անդրանիկը, ում հանձնարարված էր պահել Ղարաքիլիսայից հյուսիս ընկած հատվածը, հետ մղելով թուրքական երեք հարձակում, գաղթականության հետ անցավ Դսեղ:

թ. Հայտնի նկարիչ Ստեփանոս Ներսիսյանը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Գևորգ Բաշինջաղյանի հետ:

--	--	--

**3. Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում շարքի ժամանակագրական հաջորդականությունը. (1 միավոր)**

1. Պետոսի գլխավորած հռոմեական զորքի հասնելը Հռանդեա
2. Վաղարշ II-ի և Սևերոսի միջև հաշտության կնքումը
3. Վաղարշ II-ի գահակալության ավարտը
4. Տրդատ Արշակունու հաղթական մենամարտը գոթերի իշխանի հետ
5. Կարակալա կայսեր ուղարկված զորքի ջախջախումը Տրդատ II-ի գլխավորությամբ
6. Ներսեհ Սասանյանի՝ Հռոմի դեմ պատերազմի սկիզբը
7. Տրդատ II-ի հաղթական արշավանքը դեպի Տիգրոն
8. Խոսրով II-ի գահակալության սկիզբը
9. Հայ-հռոմեական ուժերի հաղթանակը Ոսխայի ճակատամարտում

--	--

**4. Թվարկվածներից որո՞նք Բաթումի պայմանագրի հետևանքներից չեն. (1 միավոր)**

- ա. Օսմանյան կառավարությունն ընդունեց և ճանաչեց Հայաստանի անկախությունը:
- բ. Արագոթեն գարգացան առևտրա-տնտեսական հարաբերությունները Թուրքիայի և ՀՀ-ի միջև:
- գ. Թուրքիան զավթեց Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան:
- դ. Թուրքիան պարտավորվեց միջազգային ատյաններում պաշտպանել ՀՀ-ի շահերը:
- ե. Թուրքիային անցան Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների 3/4 մասը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Դարալագյազի 1/5 մասը:

--	--

**դ) Պնդումների փունջ (0,5 X 6 = 3)**

Փնջի պնդումները ստուգվում են հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 0,5 միավոր, սխալ պատասխանի համար ոչ միայն միավոր չի տրվում, այլև հանվում է նա 0,5 միավոր, չգիտեմ պատասխանի դեպքում միավոր չի տրվում:

**1. Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

- 1) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը դեռ չէր հայտարարել նեպից հրաժարվելու մասին:
- 2) ԽՍՀՄ արագ արդյունաբերացման համար անհրաժեշտ միջոցները հայթայթվեցին երկրի ներսում, մասնավորապես՝ չափազանց ծանր հարկեր դրվեցին բանվորների վրա:
- 3) Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածը գյուղատնտեսության կոլեկտիվացումն արագացնելու կոչ էր, որին հետևեց համատարած կոլեկտիվացումը:
- 4) Խորհրդային երկրի գյուղատնտեսության կոլեկտիվացումն ապահովեց տնտեսական մեծ վերելք, աճեց գյուղացու աշխատանքի արտադրողականությունը:
- 5) Խորհրդային Հայաստանում ամենագանգվածային հասարակական կազմակերպություններից էին արհեստակցական միությունները, որոնց գործունեությունը կենտրոնացնելու համար ստեղծվեց ՀԱՄԽ-ն:
- 6) Խորհրդային Հայաստանում ստալինյան բռնությունների ալիքը գագաթնակետին հասավ 1939 թվականին:

	1	2	3	4	5	6
Ճիշտ է						
սխալ է						
չգիտեմ						

**2) «ՀԱՄԱՇԵՄԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)**

**ա. Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – թղ առաջադրանքներ: (0,5 X 4 = 2 միավոր)**

**1. Ե՞րբ է ավարտվել Հարյուրամյա պատերազմը.**

- |            |            |
|------------|------------|
| 1) 1337 թ. | 3) 1453 թ. |
| 2) 1437 թ. | 4) 1477 թ. |

**2. Ո՞վ է հաղթել 1912 թ. տեղի ունեցած ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում:**

- 1) Թեոդոր Ռուզվելտ
- 2) Կալվին Կուլիջ
- 3) Ուորեն Հարդինգ
- 4) Վուդրո Վիլսոն

**3. Ե՞րբ է հիմնվել Միտաննիի թագավորությունը.**

- 1) Ք. ա. XVI դ.
- 2) Ք. ա. XIV դ.
- 3) Ք. ա. XVII դ.
- 4) Ք. ա. XV դ.

**4. Մեծ տերությունները հրավիրեցին Բեռլինի վեհաժողովը, քանի որ.**

- 1) Վախենում էին Մերձավոր Արևելքում և Բալկաններում Ռուսաստանի գերիշխանության հաստատումից,
- 2) Վախենում էի Հեռավոր Արևելքում և Եվրոպայում Ռուսաստանի գերիշխանության հաստատումից,
- 3) Վախենում էին Մեծավոր Արևելքում և Բալկաններում Օսմանյան կայսրության գերիշխանության հաստատումից,
- 4) Ռուսաստանը մեծ տերություններին և Օսմանյան կայսրությանը սպառնում էր նոր պատերազմ սկսել:

*բ. Լրացնել պատասխանը:* (1 X 2 = 2 միավոր)

**1. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:**  
(1 միավոր)

- ա. Առաջին աշխարհամարտի ավարտը
- բ. Բրեստ-Լիտովսկի պայմանագրի կնքումը
- գ. Երիտթուրքական կառավարության հրաժարականը
- դ. Հոկտեմբերյան զինված հեղաշրջումը Ռուսաստանում
- ե. Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում
- զ. Անտանտի և սուլթանի միջև զինադադարի կնքումը

1	2	3	4	5	6

**2. Առաջին աշխարհամարտի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

(1 միավոր)

- ա. Օսմանյան կայսրության՝ Անտանտի դեմ պատերազմի մեջ մտնելը
- բ. Իտալիայի միանալը Անտանտին
- գ. Ճապոնիայի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելը
- դ. Ավստրո-Հունգարիայի կողմից Սերբիային պատերազմ հայտարարելը



- ե. Անգլիայի կողմից Գերմանիային պատերազմ հայտարարելը
- զ. Գերմանիայի կողմից Ֆրանսիային պատերազմ հայտարարելը
- է. Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելը

1	2	3	4	5	6	7

գ. *Լրացնել պատասխանը:* (0,5 X 2 = 1 միավոր)

1. Նշվածներից ո՞րոնք են Հռոմում հանրապետական կարգի ճգնաժամի հիմնական պատճառները.

- ա. Իտալիայի հյուսիսում բնակվող գալլերի անընդմեջ ապստամբությունները:
- բ. Ք.ա. III դարի սկզբին հանրապետական կառավարման համակարգի միջոցով լայնածավալ պետության վերահսկման դժվարությունը:
- գ. Իտալիկների պայքարը՝ հռոմեական քաղաքացիներին հավասար իրավունքներ ստանալու համար և ապստամբությունները:
- դ. Ժողովրդավարական ուժերի (պոպուլյարներ) և Ծերակույտի վերնախավի (օպտիմատներ) միջև սրված պայքարը:
- ե. Գերմանական ցեղերի զանգվածային վերաբնակեցումը Հռոմեական հանրապետության տարածքում:

--	--

II. ՊՍՏԱՄԽԱՆԻ ԱԶՍ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ (3 միավոր)

ա. Ներկայացրե՛ք և մեկնաբանե՛ք 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքն ու հետևանքները. ձեր կարծիքով՝ ինչո՞ւ հայկական զինուժը չզարգացրեց հակահարձակումը և չվերադարձրեց տարածքային կորուստները:

(1,5 միավոր)

բ. Ներկայացրե՛ք հասարակական գիտությունների և հայագիտության զարգացման ընթացքը Խորհրդային Հայաստանում (1920-ական թթ. – 1991 թ.). ի՞նչ նշանավոր հայագետ-գիտնականներ գիտեք, ի՞նչ ձեռքբերումներ արձանագրվեցին հայագիտության բնագավառում:

(1,5 միավոր)

Է. Մինասյան  
Պատմության հանձնաժողովի նախագահ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

17. 04. 2017 թ.